# ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՊԵՏՐՈՍ ԲԵԴԻՐՅԱՆԻՆ «Ս. ՍԱՀԱԿ – Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՊԵՏՐՈՍ ԲԵԴԻՐԵԱՆ, ՈՐ ՅԵՐԵՒԱՆ

Համայն հայութեան հոգեւոր կենտրոն Լուսոյ Խորան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից բերկրանօք սրտի Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքներն ենք բերում Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու արժանաւոր զաւակիդ:

Յարգարժան պրն Բեդիրեան,

Հոգեւոր Ճեմարանում Ձեր դասաւանդելու առաջին տարիներից անձնապէս ճանաչում ենք Ձեզ եւ այսօր մեծաւ ուրախութեամբ գնահատանքի Մեր խօսքն ենք բերում Ձեզ՝ մեր ժողովրդին ու Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն մատուցած Ձեր արդիւնաշատ ծառայութիւնների համար:

Հայրենանպաստ ու եկեղեցասէր Ձեր ոգին մանկավարժական արգասաւոր գործունէութեան առաջնորդող ուժն է, որը Ձեր գիտելիքների ու կարողութիւնների հետ բանասիրութեան դոկտորի ու պրոֆեսորի բազմամեայ փորձառութեամբ աւելիով վերադարձրել էք մեր ազգին ու Եկեղեցուն՝ կրթելով շնորհաշատ ուսուցիչներ Երեւանի պետական Մանկավարժական համալսարանում եւ կարող ու ծառայանուէր հոգեւորականներ՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գէւորգեան եւ Վազգէնեան հոգեւոր կրթօջախներում: Մեզ համար առանձնակի ուրախութիւն է, որ յատկապէս գրաբարի նկատմամբ Ձեր ջերմ սէրը փոխանցուում է հոգեւոր հաստատութիւնների Ձեր սաներին, որոնցից շատերը, ունենալով Ձեր ջանադիր ու պատասխանատու օրինակը, արդէն ուսանողական տարիներից յաջողութեամբ կատարում են թարգմանական աշխատանքներ:

Մայր Հայրենիքում ու նրա սահմաններից հեռու լայնօրէն ծանօթ են ընդհանուր լեզուաբանութեան տարբեր հարցերին վերաբերող եւ հայերենի ուսուցման մեթոդներին նուիրուած Ձեր մէնագրութիւնները, գրքերն ու հրապարակումները, բառարանները, դասագրքերն ու հարցաշարերի ժողովածուները: Հասցէագրուած ընթերցողների լայն շրջանակների՝ Ձեր աշխատութիւնները փոխանցում են ոչ միայն իմացութիւն, այլեւ մայրենի մեր լեզուի հանդէպ սէր, նրա մաքրութեան ու խօսքի գեղեցկութեան հարցում վարակիչ նախանձախնդրութիւն:

Յարգարժան պրն Բեդիրեան, Գէորգեան Հոգեւոր Ճեմարանի հիմնադրման 130-ամեայ յոբելեանի առիթով, սիրով ընդառաջելով Ճեմարանի փեսուչ Տ. Եղիշէ աւագ քահանայ Սարգսեանի ազնիւ խնդրանքին, Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական Մեր Սուրբ Եկեղեցու

## ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ - ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ

պատուոյ բարձր շքանշանը:

Ի խորոց սրտի աղօթում ենք առ Ամենակալն Աստուած, որ պարգեւի Ձեզ քաջառողջ արեւշատութիւն, ստեղծագործական նոր աւիւն ու կորով, որպէսզի Դուք շարունակէք Ձեր նպաստը բերել Հայոց գիտութեանը, դպրութեանը, Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն ու հաւատաւոր ժողովրդին:

*Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ձեզ եւ ընդ ամենեսեան. ամէն:*

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

**Տուաւ Կոնդակս ի 3-ն Նոյեմբերի**
**յամի Տեառն 2004 եւ ի թուին հայոց ՌՆԾԳ**
**ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի**
**ընդ համարաւ 267**